մեզ՝ երբ բանք սպառին և գործք թագաւորեն։ Ի 1879 թվին Քրիստոսի»։

Ինչպէս վերեւն գրել եմ, 1888 թուին հոկտ. գնացինք այնտեղ ուխտ բաւական բազմութեամբ՝ և առաջնորդեց մեզ երեցփոխան պ. Սարգիս Զահիջանեանց, և ընդունեցին մեզ և հիւրասիրեցին սուրբ Գրիգորիսի մօտ Մեծապատիւ գաւառապետ Իւան Մօսէիչ Աստուածատուրեանց և նորա ամուսին Հռիփսիմէ տիկինը, որ էր դուստր յիշեալ Կաճկաճեանցի։ Բերդի հարաւային դրան մեծ դարբասի ճակատին քանդակուած կան երկու առիւծներ և նրանց ներքեւ մի արապական արձանագրութիւն, որը երեւում է որ Արապացիք Քրիստոսի 650 750 յանուն իրենց նոր մարգարէ Մահմէտի գինուորուած՝ այս կողմերը արշաւելու ժամանակն են բերդը կամ դուռը նորոգել և գրել. և այն արձանագրութեան պատճէնների օրինակելը յանձնեցի Դարբանդի Երբահամ քահանայ Սպանդունուն, որ յարմար միջոցում թուրք կարդացողի ձեռօք օրինակել տայ զգուշութեամբ և ուղարկէ, որը և 1892 թուի օգոստոսին իւր գրութեան հետ ուղարկեց այն արձանագրութեանց պատճէնները, որը ահա հանդէպ են դրած, գրուածոցս ընթերցող, Տէր Երբահամի գրութեան պատճէնի հետ, որ նայես և եթէ կարող ես, արձանագրութիւնը կարդաս և թարգմանես, և ցոյց տաս, թէ ով է այդ արձանագրութիւնը թողել մեզ հետաքրքրութեան համար[1]։

بسم الله الرحمن الرحيم

Այսպիսի արապական արձանագրութիւնք շատ կան մզկիթների վրա յերեւան, Նախիջեւան, են. բայց որպէս թուրք

[1]) Դարբանդ Նամէի ասելով Քիւրքի գրերը ցոյց են տալի, որ Դարբանդի պարիսպները նորոգել է Գատիր իբն Միւէնիէ Բաղդատի խալիֆայն։